հարցականներու և զարմացականներու բա-նակով. կը զայրանայ «ոգէտ» կոչուելուն համար այն Լեւոն, որ համալսարաններէ անցած չէ իրեն պէս։ Բայց ինքն ալ նոյնպէս մարզուած չէ՞ երբ «խօսքի արուեստակութիւն» կ'անուանէ նախորդ գրախօսականը ճիշդ Լումայի նոյն համարին մէջ՝ ուր Ն. Փարամեանց կը պանդատի իր մի գրքի մասին թէ «լեզուն ձգտում է սովորականից դուրս, արհեստական ձեւերի կիրառութեան» և կը ստիպուի աւելցնել թէ «պարզութիւնը անոր զարդն է, մանաւանդ մարդավարժող, ուսուցանող անի»։

Այս յօդուածը ներկայ Լումայի յատկն է. մի քանի ծանուցումներէ վերջ, կը սկսի Թումանեանի. Հոն կ'աւարտի Նոյր երաժիշտ գեղեցիկ մէջը, և կը շարունակուի Դունանեանց հաւաքածոյն, որոյ համար բանաստեղծ մը պէտք է մեծապէս երախտապարտ ըլլայ Արիստակէս Սրբեիկեանոս Պաւլեանի։

Լումայի գրական ընդարձակ տարերք մ'ընդգրկած է. պարունակութիւնն դասակով, իր նպատակը չէ քննական զուտ պատճառաբանութիւններ ներկայացնել։ Այսու իր ծառայէ Հայկական գիտութիւնները ամէն գիտասէրներու ընելու. փափաքելի կը մնայ միայն՝ որ ձեռնհաս աջակից մը լեզուական բաժնի պակասը լեցնէր՝ ստուգաբանութեամբք կամ աշխարհաբարի խնդիրներ հետազօտելով։

Ե. Կ. Տ. Ս.

## ՆԱՄԱԿ ԱՌ Պ. ՉՕՊԱՆԵԱՆ

Գիտնալով որ ձեր նամակները կը հրատարակուին, կը ստիպուիմ Ձեր գրութեան քաղ նամակով պատասխանել։ Կարդացի իմ մասին Ձեր քննադատականը։ 1. Երեք տարի առաջ Պարոնեան ուղղած բարեկամական նամակս բնաւ առած մը ըլլայ գրելով զիս խրախուսելու, հրապարակաւ Ձեզ պաշտպանութիւն, միայն կը խնդրեմ որ անձնականն հաստատութեան չկրնայ, որուն օրինակը ըլլայի Պարոնեան պէտք է ծանօթ ըլլայ. — 2. Այն նամակովս Պարոնեան գրութեան երբեք հետաքրքրուող չեմ ներկայացուցած. այլ ծանօթներով մը գրութեանց գեղեցիկ ոճին, զոր կշռադատած եմ բանաստեղծ Պուշկինի կենսագրական ուսումնասիրութեանց եւ «Դուռնիկ» «Հայրենիք» ու «Արեւելք» թերթերուն մի քանի յօդուածներուն մէջ. — 3. Նոյն նամակովս Պարոնեան յայտնած էի որ «Հայրենիք»ի խմբագիրներու պատմութիւնը պէտք գրեմ, եւ զի դուք ալ այդ խմբագրութեան մասնակցած էիք, անտարակոյս պէտք էր Պարոնեան մասին կենսագրական տեղեկութիւնները խնդրել, ինչպէս արդէն բարեկամներս տեղեկութիւն առիւ եւ մինչեւ ժամաննակ խնդրեցիք որ զՊարոնեան Տանձազարեան—Բաշխալեան խմբին վերադարձնէ։ Ուստի պարզ է խնդիրը, Ձեր կենսագրականը եւ կենսագրութիւնը երաշխաւորելու շարժառիթը ծիծաղելի մը առաջ չէ եկած, այլ «Հայրենիք»ի խմբին պատկանելիկը։ Իսկ երբ իմ այդ նամակին մասնաւորութիւնս հրատարակուի, այն ատեն դիտի կարենաք ըմբռնել թէ Պարոնեան մասին ինչպէս կը մտածեմ ու կը գրեմ։ Եւ այս տողերը թող չուարուին չպատասխանելու. դարձեալ ազատ էք զիս խարազանելու. յնոռնելով փերոյջ պատմելը։

ԽՄԲ.

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ*

76. Պ. Մ. Չերազի թերթէն (թիւ 153) կ'իմանանք որ Թէհրանի մէջ շատ մը Հայեր ուրուշած են ընկերութիւն մը կազմելու, որուն նպատակն պիտի ըլլայ տեղւոյն մէջ լաւ տպարան մը հաստատել, հրատարակելով Հայ, պարսիկ և գաղղ. լրագիրներ։ Եւրոպայէն առաջնակարգ տպարանական գործիքներ բերել պիտի տան։ Այս լուրը բաւական մխիթարական է. Նմանօրինակ կրթական շարժումներ վերջերս կը նշմարուին մեր Պարսկահայ եղբարց մէջ. բայց տակաւին Թիֆլիսի շարժում մը չերեւցաւ. ինչո՞ւ յառաջադիմական գործերու մէջ պաղ գտնուիլ։ Պարսկաստանի այժմեան վարչութեան օրով մեր ազգայինները կրնան դիւրաւ կրթական մեծ. մղում մը տալ, որ պատմենք գործունէութեան. հոն Հայ մամուլի գոյութիւնը արտաքնական չէ։

77. Մկրտիչ Սարգսեանի շիրիմը։ — Իգդիրի մէջ գտնուող Մշեցի պանդուխտ ազգայինք՝ համպանակութեան ընելով իրենց շրջանին մէջ, համեստ և գեղեցիկ շիրիմ մը կառուցին Մ. Սարգսեանի գերեզմանին վրայ, 340 ֆրանքի գումարով մը։ Փափաքելի էր Իգդիրցի Հայերը եւս օրինակ առնէին յիշեալ պանդուխտ և ազգասէր ազգայիններէն. Հայ երաժշտապետ Տէր Զուլալեանին եւս շիրիմ մը կանգնէին. որ մեացին այն Պաւստախօսները թէ «Զուլալեանի արձան պիտի կանգնենք»։ Թող գոնէ պարզ շիրիմ մը կանգնէին յարգելի երաժշտապետին գերեզմանը չկորսուելու համար։

ԱՐԱՑ

* Տար. տես Յուլիս 1901 :

digitised by A.R.A.R.@